ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ*.**

1) հանապազ-րդ, բն-ության, նախ-ել, ամեն-ության
2) -թյակ, տն-ենն, օրըստ-ել, օր-ը
3) աման-ության, քնքշ-որ, բաց-թյա, թիկն-թոց
4) բար-ություն, ջր-հինեք, հ-գուտ, հ-դս ցնդել

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ձ*.**

1) հանդեր-անք, հերար-ակ, հասարակա-, վար-ակ
2) անցուդար-, որ-աքարե, անեղ-, վերամբար-
3) լոր-, փոր-անք, ան-կալի, դեղ-անիկ
4) բար-իթողի, կեղծ-իք, որ-կալ, հարցուփոր-

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում *ը*.**

1) նոր-նձա, մերթ-նդմերթ, ան-ստգյուտ, առ-նչվել
2) կ-նկներ, կոր-նթարդ, որոտ-նդոստ, դյուր-նկալ
3) երկ-նտրանք, երկ-նչել, ինքն-ստինքյան, վեր-նձյուղված
4) դյուր-մբռնելի, ճեպ-նթաց, ան-նտել, վերջ-նթեր

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ւ*.**

1) փա-փուշտ, սուսա-բար, վերա-բարձ, ա-բիծ
2) ա-պիովանի, բա-բիռ, թ-բիր, ինքնա-փոփ
3) դա-բարան, թա-բ, հա-պատրաստից, ը-պանակ
4) ը-բոշխնել, ճա-փա, ա-բողջ, բա-բեր

5 **Տրված բառիմաստները համապատասխանում են աջ շարքի բառերից չորսին. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

1. տնակ այգում	ա. կղմինդր
2. առաջին պտուղ	բ. կնդրուկ
3. թրծած աղյուս	գ. երախայրիք
4. ասեղնատերև ծառ	դ. հնձան
	ե. մայրի

1) 1 -գ, 2-ե, 3 - գ, 4 - ա
2) 1 - ա, 2 - բ, 3 - դ, 4 - ե
3) 1 - բ, 2 - դ, 3 - ա, 4 - գ
4) 1 - դ, 2 - գ, 3 - ա, 4 -ե

6 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) կեղծանուն - պատվանուն, գիտակցել - ըմբռնել, արմատական - առաջնային, դրվատել - փառաբանել
2) գամվել - մեխվել, գաղտնապահ - փակբերան, գարշադեմ - տգեղ, գնահատելի - արժեքավոր
3) գանձարկղ - դրամարկղ, խոնջանալ - սեթևեթել, գեղաճաշակ - բարձրաճաշակ, գլխարկ - գդակ
4) գիշերերգ - ցայգերգ, արամբի - զամբիկ, գինարբուք - խնջույք, գինդ - ականջօղ

7 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ կա:**

1) Կայծակի մտրակից խրտնած կարմիր մի նժույգ ծառս եղավ տեղից:
2) Հեռվից կապտավուն սարերն այնքան պարզ էին երևում, որ կարելի էր համրել նրանց բոլոր ձորակները:
3) Լինե՞ր, այնպես լիներ, որ ինքը հնձվոր լիներ, նրանց արտը հնձեր, Սոնան հաց բերեր իրեն:
4) Միրհավն էր. հանգիստ քուջուջ անելով փոխում էր արնագույն տոտիկները:

8 **Տրված բառերի բառակազմական վերլուծություններից ո՞րն է սխալ.**

1) կառամատույց = կառ+ ա+ մատ+ույց
2) խորհրդակցություն = խորհ+(ու)րդ+ ա+կ(ի)ց+ություն
3) ապերջանիկ= ապ+ երջան+ իկ
4) վայելչագրություն = վայել+(ու)չ+ ա+ գ(ի)ր+ություն

9 **Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

1) կոնյակագործներ, գազամուղներ, դաշույններ, խտանյութեր
2) գործատերեր, նշագեղձեր, կողմնացույցներ, լեզվաբաններ
3) աստղագետներ, ոտնաձայններ, որմնասյուներ, արծվաբներ
4) նյութամոլներ, մարզադաշտեր, սպունգներ, լուսամուտներ

10 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *վա* հոլովման:**

1) կեսգիշեր, իրիկնաժամ, երբ, առաջ
2) ամառ, կեսօր, անձնանուն, գիշեր
3) երեկ, գարուն, ցերեկ, ժամ
4) շաբաթ, ժամանակ, վաղը, այսօր

11 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հողի գործածություն կա:**

1) Վռազ անցան երազ, մուրազ, ու չհասա ոչ մեկին,
Կյանքս թեթև տանուլ տված գրազ եղավ, անց կացավ:
2) Հե՜յ ագահ մարդ, հե՜յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ….
3) Աշխարումս ախ չիմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա….
4) Ծերուկ զինվորս քեզ կասեմ մի բան. հողն է քո ուժը, ոչ թե սին ոսկին:

12 **Ո՞ր նախադասության մեջ գերադրական աստիճանով դրված ածական կա:**

1) Շուկայում նա գերադասում էր մրգավաճառների խանութները, որոնք գրավում էին հրապարակի մեծագույն մասը:
2) Երբեմն մի ահագին բազմություն լիքը զամբյուղներով ուխտ էր գնում Սուրբ Մարիամ եկեղեցի:
3) Կյորեսը մեռնում էր, և ամենից ավելի նրան մաշում էր Գորիսը՝ մեծամեծերի այդ քաղաքը:
4) Խուլ գյուղեր կային անտառների խորքում, բարձր-բարձր լեռների լանջերին և չափազանց խոր ձորերում:

13 **Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են հոլովվում:**

1) նա, քանի՞սը, ոչինչ, ինքը
2) ով, իրար, մենք, այսպես
3) ինչ, ուր, միմյանց, սա
4) դու, ոմանք, բոլոր, ինչու

14 **Ո՞ր նախադասությունն է պարզ ընդարձակ:**

1) Յուրաքանչյուր ոք լաց էր լինում:
2) Մարդիկ ու մեքենաները անցուդարձ էին անում:
3) Անտառն ավելի գեղեցիկ էր թվում:
4) Խոսակցությունը կարծես հաճելի էր նրան:

15 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Բացեցի բակի ճռռացող դուռը և նույն ակնթարթին տեսա, որ երիտասարդ մի կին կարմրատակած կռացել է թոնրի վրա, իսկ կողքին նստած է մի շիկահեր աղջիկ:

1) 

2) 

3) 

4) 

16 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

1) Համայն մարդկությունը միշտ էլ ձգտել է խաղաղության:
2) Նա այն մարդկանցից է, որ, հասնելով մեծ փառքի, բնավ չեն մեծամտանում:
3) Առևտուրը զարգանում է. հարկավոր է նոր շուկաներ:
4) Կան բաներ, որոնց մասին պետք է լռել:

17 **Բարդ նախադասություններից որի՞ բաղադրիչ նախադասություններն են միմյանց հետ կապակցված հարաբերական դերանունով:**

1) Առանձնատունը, որ քիչ հյուրեր չէր տեսել, գունաթափվեց, ամայացավ:
2) Տղաները վազվզում են ուղղահայաց պատերի վրայով, այնտեղից իջնում են ակնթարթային սլացքով:
3) Այն ժամանակ ես չգիտեի այդ բառի նշանակությունը, ուստի նախընտրեցի լռել:
4) Նա շատ լավ գիտեր՝ որտեղ են «գիշերում խեցգետինները»:

18 **Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:**

Հարսանիքների ժամանակ նորելուկ ու նշանավոր աշուղների հետ մրցում էին նաև տեղացիների մեջ հայտնի հորովել երգողները:

1) ենթակա
2) որոշիչ
3) ուղիղ խնդիր
4) ստորոգելի

19 **Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Ծերունին խաղողի վազերն էտելիս այգում նկատեց կծիկ դարձած թունավոր օձեր:

1) Ծերունին, երբ խաղողի վազերն էր էտում, այգում նկատեց կծիկ դարձած թունավոր օձեր:
2) Երբ ծերունին այգում խաղողի վազերն էր էտում, նկատեց կծիկ դարձած թունավոր օձեր:
3) Ծերունին, որ այգում խաղողի վազերն էր էտում, նկատեց կծիկ դարձած թունավոր օձեր:
4) Այգում խաղողի վազերն էտելիս ծերունին նկատեց թունավոր օձեր, որոնք կծիկ էին դարձել:

20 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Տասնվեց-տասնյոթ տարեկան մի պատանի, դուրս գալով դպրոցից և ստեպ-ստեպ շոշափելով գրպանի թանկարժեք պարունակությունը՝ հասունության վկայականը՝ դեգերում է Գյումրի քաղաքի հրապարակում:
- Տարտամ քայլերով անցնում էր նա հյուրանոցի առջևով և շուռ գալով՝ տեսավ շքամուտքից դուրս եկող մի մարդու՝ վիթխարի գամփռի շղթան ձեռքին:
- Մինչև թարգմանվեին Վահանից առգրավված գրքերը, մինչև ծանոթանային դրանց բովանդակությանը՝ ահագին ժամանակ կանցներ:
- - Մենք ձեզ չենք վռնդում. եթե ցանկություն ունեք՝ կարող եք գիշերել ցախատանը,- ասել էր տանտերը՝ գլխով ցույց տալով բակի ցածրիկ շինությունը:

1) չորսում
2) մեկում
3) երկուսում
4) երեքում

21 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Ալեքսանդրը պարսպին մոտեցրեց մեքենաները և ճեղքվածքներ բացելով պարսպի այդ մասում՝ մտածում էր առաջացած անցքերի միջով ներխուժել քաղաք:
2. Սակայն այդտեղ նրա ուշադրությունը գրավեց գետը, որը հոսում էր քաղաքի միջով և ձմեռային անձրևներից դառնում ավելի հորդառատ, բայց որն այժմ լիովին չորացել էր: Պարիսպները չէին անջրպետում նրա հունը մինչև հատակ, այնպես որ զինվորները կարող էին նրա տակով քաղաք մտնել:
3. Երկու օրում գրավելով հինգ քաղաք և ստրկացնելով բնակչությանը՝ Ալեքսանդր Մակեդոնացին գնաց դեպի Կյուրոսի քաղաքը: Այդ քաղաքը շրջապատված էր ավելի բարձր պարսպով, քան մնացածները: Այնտեղ էր հավաքվել բարբարոսների մեծամասնությունը, ընդ որում՝ ամենառազմատենչները, այնպես որ մակեդոնացիներին այնքան էլ հեշտ չէր լինելու գրավել այն միանգամից:
4. Մինչ բարբարոսներն իրենց ամբողջ ուշադրությունը դարձրել էին մեքենաներին և պաշտպանվում էին այն վայրում, ուր դրանք կանգնած էին, Ալեքսանդրը իր զորքի մի մասի հետ բոլորից աննկատ քաղաք մտավ այդ գետի հունով և ջարդելով դարպասի մի փոքր հատված՝ ներս թողեց նաև մնացած զորքը:

1) 3, 1, 4, 2
2) 1, 3, 2, 4
3) 3, 2, 1, 4
4) 3, 1, 2, 4

22 **Տրված բնութագրումներից ո՞րը 5-րդ դարի հեղինակներից որի ստեղծագործությանն է վերաբերում:**

1. Կերտված է հայ կրթական, լուսավորչական գործչի առաջին պատմագեղարվեստական կերպարը:
2. Սկսվում է Տրդատ Մեծի մահից և հասնում մինչև 387 թվականը, երբ Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:
3. Ընդգրկում է շուրջ հարյուր տարվա պատմություն՝ սկսած Հայաստանի մասնատումից Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:
4. Ներկայացվում է հայ նախարարական տոհմերի ծագումնաբանությունը:

ա. Փավստոս Բուզանդ, «Հայոց պատմություն»
բ. Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն»
գ. Կորյուն, «Վարք Մաշտոցի»
դ. Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»

1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
2) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
4) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ

23 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

1. Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ
2. Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն
3. Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն
4. Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն
5. Ընկեց ի մէջք օրիորդին ալանաց

1) 2, 1, 5, 3, 4
2) 3, 1, 2, 5, 4
3) 1, 3, 2, 4, 5
4) 1, 2, 3, 4, 5

24 **«Սասնա ծռեր» էպոսում Մհերի մահվանից հետո «յոթ դռների ետև» փակված Դեղձուն-Ծամը սգահան է լինում, երբ՝**

1) Վերջին արաբը հալածվում է հայրենի երկրի սահմաններից:
2) լրանում է որդու՝ Մեծ Մհերի մահվան քսանհինգ տարին:
3) Դավիթը Մսրա Մելիքի դեմ կռվի գնալուց առաջ սասունցիներին «կացե՛ք բարով»-ներ է ասում:
4) Դավիթը մենամարտում սպանում է Մսրա Մելիքին:

25 **Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում Աղասին ինչպե՞ս է իմանում հոր՝ զնդանում բանտարկված լինելու մասին:**

1) Նազլուն է հայտնում նամակով:
2) Հորեղբայր Ավետիքն է հայտնում:
3) Քանաքեռցիներն են լուր բերում:
4) Մոր ուղարկած նամակից է տեղեկանում:

26 **Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպում Աբիսողոմ աղան ե՞րբ է առաջարկում բժշկին իրեն քննել:**

1) Երբ իմանում է, որ բժիշկը Եվրոպայում է կրթություն ստացել:
2) Երբ իմանում է, որ իր անունը լրագրերի մեջ պիտի հրատարակվի:
3) Երբ համոզվում է, որ բժիշկը միայն հարուստներին է բուժում:
4) Երբ հասկանում է, որ ինքը ծանր հիվանդ է:

27 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Ու լույսն անոնց, անխոս հուրի՝ դյութական,
Հրմայագեղ ու վարսքերով .....,
Շատրվանին կ'իջնե գուռին մեջ կաթե:

1) մետաքսե
2) մըշուշե
3) սատափե
4) արծաթե

28 **Վահան Տերյանի ո՞ր բանաստեղծությունից է հատվածը:**

Ու կարոտակեզ ահա կրկին
Վերադառնում եմ, որ առհավետ
Ունկնդիր լինեմ քո հին երգին
Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ...

1) «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի…»
2) «Մի՞թե վերջին պոետն եմ ես...»
3) «Իջնում է գիշերն անգութ ու մթին…»
4) «Որպես Լաերտի որդին...»

29 **Ակսել Բակունցի ո՞ր պատմվածքն է սկսվում հետևյալ հատվածով:**

«Աշուն էր, պայծառ աշուն…
Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ: Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համարել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմրին տվող մասրենու թփերը:
Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը»:

1) «Սպիտակ ձին»
2) «Խոնարհ աղջիկը»
3) «Միրհավ»
4) «Ալպիական մանուշակ»

30 **Ի՞նչ ճակատագիր է ունենում Վասակ Սյունին Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում:**

1) Անհայտ է:
2) Պատերազմից հետո զղջում է իր արարքների համար, մեռնում ու թաղվում է պարսից աշխարհում:
3) Պարսից Դռան կողմից դատապարտվում է մահվան:
4) Պարսիկները նրան քարշ տալով դաժանաբար սպանում են:

31 **Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Կյանքս, որ հուշ է դարձել, հեռանալիս չանիծես.
Կյանքս կանցնի, կմարի, բայց երգս կա, կապրի դեռ:

1) «Տաղ անձնական»
2) «Գանգրահեր տղան»
3) «Հեռացումի խոսքեր»
4) «Դանթեական առասպել»

32 **Տրված ստեղծագործություններից ո՞րը դրամատիկական սեռի *չէ:***

1) «Քաջ Նազար» (Հ. Թումանյան)
2) «Պատվի համար» (Ալ. Շիրվանզադե)
3) «Պաղտասար աղբար» (Հ. Պարոնյան)
4) «Արա Գեղեցիկ» (Ն. Զարյան)

33 **Շարքերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ *չկա.***

- այգեէտ, աներկբա, ողոքել, խոչընդոտ
- հանապազորդ, առնչվել, երկնչել, փասիան
- տրտմորեն, հնոտի, չընդդիմանալ, զմռսել
- օթոց, մթնկա, կորընթարդ, մանյակ

34 **Բառերից քանի՞սն են *անհոդակապ.***

հորդառատ, գարեհաց, այգեբաց, վազանց, սակագին, աղցան, լուսամուտ, գծագիր, լավատես, սողանցք:

35 **Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.**

համայն, այսպես, դու, այս, այսքան, ոչ մի, բոլոր, մեկմեկու, միևնույն, ամենքը:

36 **Տրվածներից քանի՞սն են անկախ դերբայ.**

երգի, զարմացնի, հանգցնելիս, անհանգստացել, ծանոթացել, մոտեցած, քարացող, դիպչող, հանգրվանած, տեսել, լացելիս, փայլատակող:

37 **Տրված հատվածում քանի՞ հատկացուցիչ կա:**

Բացվեց մեր պարտեզի դռնակը, և դռան բարձր ձայնը խլացրեց այն բացողի թույլ կանչը, որ մի կարճ ժամանակ թրթռաց վայրի թփերի ու երիցուկների վրա՝ բախվելով ծեփը թափած մի պատի:

38 **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**

շրջադասություն, անձնավորում, մակդիր, հանգավորում, հակադրություն:

Մեղմիկ քայլում է երեկոն քնքուշ,
Ծովը մետաքսե քղանցքն է փռել,
Նոճիներն ափից շրշում են անուշ,
Ճայերն այրերում նիրհել են, լռել:

39 **Նշել այն բառերի համարները, որոնցում երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

1. ծննդավայր, 2. խուզարկու, 3. բնափայտ, 4. տարակուսանք, 5. ուխտադրուժ, 6. ժուժկալ, 7. համահունչ, 8. կազմալուծել, 9. եղջերավոր:

40 **Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հականիշ են:**

1. առյուծ կտրել - երկինքը գլխին մթնել
2. գլխում մի այբ չկա - խելքի շտեմարան
3. լեզուն շաղ տալ - լեզվի կապերը բանալ
4. գրպանը սրբել - գրպանը թեթևացնել

41 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ներգործական սեռի բայ կա:**

1. Մի օր դպրոցում արտակարգ դեպք պատահեց:
2. Արևելքը շառագունել էր. արդեն լուսանում էր:
3. Քիչ անց հարևան վագոնից վերադարձավ ամուսինը՝ մասամբ վերագտած հոգու անդորրը:
4. Երիտասարդը վազեց դեպի կառքը և ուղղելով բաճկոնի օձիքը՝ կանգնեց ձգված, մինչև զորավարը նստեց օթոցին:
5. Ու այս խոսքերն արտաբերեց այնքան լուրջ, որ կինը նորից տարակուսանքի մեջ ընկավ:
6. Իններորդ պարկը տեղափոխելուց հետո նա մի պահ կանգ առավ:

42 **Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

Գարնան արևային օրերը հիշեցնում էին ինձ, որ շուտով մայիս է գալու, և դասերն ավարտելուց հետո նույն ճանապարհով պիտի վերադառնամ քաղաք և երբեք չպիտի տեսնեմ Ձորագյուղը:

1. **պիտի վերադառնամ** – պարզ ստորոգյալ, **երբեք** – ժամանակի պարագա
2. **արևային** – որոշիչ, **օրերը** - ենթակա
3. **հիշեցնում էին** – պարզ ստորոգյալ, **ինձ** – հանգման անուղղակի խնդիր
4. **շուտով** – ժամանակի պարագա, **մայիս** - ենթակա
5. **գալու է** - պարզ ստորոգյալ, **նույն** – որոշիչ

43 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում կետադրական որևէ նշան *չպիտի* դրվի:**

1. Բոլորին մեկ առ մեկ աչքի անցկացնելուց հետո հանդիսավոր կեցվածքով վեր կացավ նստած տեղից ու մոտենալով հերթով բարևեց յուրաքանչյուրիս:
2. Այդ աշնանը հրատարակչության հանձնարարությամբ ուսումնասիրում էի բանաստեղծի ձեռագրերն ու արխիվը և ամեն մի ձեռագիր թերթելիս կարծես մի նոր աշխարհ հայտնագործում ինձ համար:
3. Ինչպիսի ցնցող տպավորություն թողեց մեզ երիտասարդ գրողներիս վրա նրա նոր գիրքը:
4. Սիրում էր հագնել երկար խալաթ կամ մտավոր աշխատանքով տարված մարդկանց հատուկ մեկ այլ տարօրինակ շոր և երբեք չէր հանդուրժում որևէ մեկի կողմից իր հագուստի վերաբերյալ արված որևէ դիտողություն կամ հեգնանք:

44 **Նշել թվերը՝ ըստ տողերի ճիշտ հաջորդականության:**

1. Երազի մեջ երջանիկ
2. Լինե՞ր մանկան արդար քուն
3. Լինե՞ր հեռու մի անկյուն
4. Հաշտ ու խաղաղ մարդկություն

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:**

1. Փոխանվանաբար գործածված ոչ բոլոր խոսքի մասերը կարող են դառնալ ենթակա:
2. Ձեղչված ենթակայով նախադասությունը երկկազմ է:
3. Ենթական կարող է արտահայտվել և հարցական և հարաբերական դերանուններով:
4. Բոլոր անկախ դերբայները կարող են դառնալ ենթակա:
5. Առածները երբեմն անենթակա նախադասություններ են:
6. Միակազմ նախադասությունների մի մասը ունի դիմավոր բայ, բայց չունի ենթակա:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Վաղորդյան աղջամուղջը հետզհետե ան-ացավ (1)՝ իր տեղը զի-ելով (2) արևի շառագույն ճառագայթներին: Բնությունը զար-նեց (3): Ծառերի և ծաղիկների սաղար-ներին (4) նստած ցողը մեղմ-րեն (5) գոլորշիացավ, և յուր-րինակ (6) փայլով շողշողաց մուգ կանաչ բուսականությունը: Պ-նված (7) սալորենին նազեց՝ ասես համբույր ուղարկելով ճ-ղերին (8) թառած արագիլներին: Արթնացան նաև ծաղիկները՝ գինարբու-ը (9), սուսա-բարը (10), վարդը:

1) 1-ե, 2-ջ, 3-տ, 4-թ, 5-օ, 6-օ, 7-ճ, 8-յու, 9-ք, 10-մ
2) 1-է, 2-ջ, 3-թ 4-տ, 5-օ, 6-ո, 7-չ, 8-ու, 9-կ, 10-ն
3) 1-է, 2-չ, 3-թ, 4-թ, 5-ո, 6-ո, 7-չ, 8-ու, 9-գ, 10-ն
4) 1-է, 2-ջ, 3-թ, 4-թ, 5-ո, 6-օ, 7-ճ, 8-յու, 9-կ, 10-մ

47 **Ո՞ր շարքի բառերի բոլոր վանկերն են փակ.**

1) կսկիծ, հայտնի, մարդասպան, ճարպիկ
2) ձեռնարկել, գերդաստան, ընկույզ, նիրհել
3) նշմարել, հազվագյուտ, դիպված, կպչուն
4) կշտամբել, կորնթարդ, կոպտել, կրպակ

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում միասին.**

1) օդ(ուղի), ճեփ(ճերմակ), եռ(ու)զեռ, գործ(ընկեր)
2) բուժ(քույր), հենց(որ), բնակ(վարձ), մինչ(դեռ)
3) պետ(կրկես), ազգ(ու)տակ, զառ(ի)վեր, բառ(մասնիկ)
4) պատե(պատ), զին(գրքույկ), փայտ(փորիկ), ճեպ(ընթաց)

49 **Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. Տատս թոնրի կողքին էր շարել նոր թխած (1. ջնարակները, 2. նկանակները):
բ. Ժամանակն այդպես էլ չսպիացրեց նրա հոգում մնացած (1. խարամը, 2. խարանը):
գ. Օրակարգում ներկայացված ոչ մի հարցի շուրջ (1. միացյալ, 2. միասնական) որոշում չկայացվեց:
դ. Որոշվեց հիվանդի վիրահատությունը կատարել (1. տեղային, 2. տեղական) անզգայացումով:

1) ա - 2, բ - 2, գ - 2, դ - 1
2) ա - 2, բ - 1, գ - 2, դ - 1
3) ա - 1, բ - 1, գ - 2, դ - 2
4) ա - 1, բ - 1, գ - 1, դ - 1

50 **Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) ***ժամավաճառ լինել*** - իզուր ժամանակ վատնել, ***երեսից կախվել*** - թախանձել
2) ***արյունը ջուր դառնալ*** - սահմռկել, ***աչքերը փակել*** - մեռնել
3) ***աչքը ջուր կտրել*** - կարոտով, անհամբերությամբ սպասել, ***անձյուն ձմեռ*** - անճարակ մարդ
4) ***գլխարկը թեք դնել*** - նորաձև հագնվել, ***գլխին տալ*** - զոջալ

51 **Տրված բառերից ո՞րն է կազմությամբ համապատասխանում բառակազմական հետևյալ կաղապարին՝ արմատ+վերջածանց+վերջածանց.**

1) բանակային
2) պարապմունք
3) սառցարան
4) գինեգործություն

52 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) հետամտել - ձգտել, անթաքույց - սքողված, երբեմն - ստեպ-ստեպ
2) հրավիրել - արտաքսել, ավերակ - շեն, լայն - անձուկ
3) բարեկիրթ - անտաշ, գոգավոր - խորդուբորդ, համախմբել - ջլատել
4) անկանոն - օրինաչափ, ականակիր - պղտոր, խոչընդոտել - նպաստել

53 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են սոսկածանցավոր:**

1) մտնել, ընկնել, խրտնել, բուսնել
2) հասնել, սառչել, ուրանալ, հոգնել
3) համընկնել, փախչել, պրծնել, մոտենալ
4) հանգչել, կառչել, կպչել, սառչել

54 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված ենթադրական եղանակով:**

1) կշտամբեց, կայրի, կուղարկի, չի ուղղի
2) կուտեմ, չեմ սուզվի, կաշխատենք, ջանա
3) կապրենք, կուտակենք, կտեսնի, կուշանա
4) կգաս, չի աղոթի, կամայանա, կընկերանային

55 **Ո՞ր նախադասության մեջ կապ կա:**

1) Մինչև չտեսնես, չհավատաս:
2) Ով պատմություն ունի, չի կարող հետ չնայել:
3) Առաջ մանրամասնորեն հիշում էի, հիմա ամեն ինչ մոռացել եմ:
4) Տարիներ հետո քեզ տեսա նորից:

56 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերաբերականներ:**

1) հապա, ցավոք, նույնիսկ, երիցս
2) ահա, հիրավի, անգամ, անկասկած
3) սոսկ, մանավանդ, հավասար, մի՞թե
4) գուցե, իրավամբ, թեկուզ, ա՞խ

57 **Տրված նախադասության մեջ ի՞նչ անդամ է անորոշ դերբայը:**

Ես գնամ նորից՝ ինձ որոնելու
Ճրագով, մոմով, կայծակի լույսով:

1) հանգման անուղղակի խնդիր
2) որոշիչ
3) հատկացուցիչ
4) նպատակի պարագա

58 **Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

Ես չեմ պատմում այն բանաստեղծի մասին, որ երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովն է նետել:

1) Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովը նետած այն բանաստեղծի մասին:
2) Ես չեմ պատմելու երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովը նետող բանաստեղծի մասին:
3) Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովը նետած բանաստեղծի մասին:
4) Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմող բանաստեղծի՝ իրեն ծովը նետելու մասին:

59 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները:**

1. Այն աչքերը, որ չեն լացել,
   Բան չեն տեսել այս աշխարհում:
2. Ապրե՛լ, ապրե՛լ, այնպես ապրել,
   Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ
   ծանրությունը:
3. Ես նախանձում եմ նրանց բոլորին,
   Ովքեր ապրում են հավատով խորին:
4. Բարի նախանձով նրան եմ հիշում,
   Ով չի մոլորվում անթափանց մուժում:
5. Պարզվում է, որ չեմ նախանձում կյանքում ոչ ոքի…

ա. ձևի պարագա
բ. հանգման խնդիր
գ. որոշիչ
դ. ուղիղ խնդիր
ե. ենթակա

1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ, 5-ե
2) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ, 5-ե
3) 1-ե, 2-ա, 3-դ, 4-բ, 5-գ
4) 1-գ, 2-բ, 3-ա, 4-ե, 5-դ

60 **Ո՞րն է տրված բարդ նախադասության ստորադաս նախադասության պաշտոնը:**

Հիշում եմ, թե որքան եմ նզովել կյանքը:

1) հատկացուցիչ
2) ուղիղ խնդիր
3) չափ ու քանակի պարագա
4) ենթակա

61 **Նախադասության նշված անդամներից ո՞րը կարող է արտահայտվել ենթակայական դերբայով:**

1) պարզ ստորոգյալը
2) ձևի պարագան
3) ժամանակի պարագան
4) որոշիչը

62 **Նշվածներից ո՞րը պոեմ *չէ:***

1) «Դանթեական առասպել» (Ե. Չարենց)
2) «Հարճը» (Դ. Վարուժան)
3) «Արա Գեղեցիկ» (Ն. Զարյան)
4) «Թմկաբերդի առումը» (Հ. Թումանյան)

63 **Նշվածներից ո՞վ որ պատմական-գեղարվեստական հերոսի զավակն է:**

ա. Գոռ	1. Վասակ Սյունի
բ. Ներսիկ	2. Վարդան Մամիկոնյան
գ. Զոհրակ	3. Վահան Մամիկոնյան
դ. Սամվել	4. Գևորգ Մարզպետունի

1) ա-1, բ-4, գ-3, դ-2
2) ա-1, բ-4, գ-2, դ-3
3) ա-4, բ-1, գ-2, դ-3
4) ա-4, բ-2, գ-1, դ-3

64 **Քանի՞ բառում ածանցի հնչյունափոխություն կա.**

բնութագրական, գերապատվություն, տեսչական, նկարչական, միջնապատ, մատուցարան, ժողովրդական, ներկայացուցչություն, վարչություն, վարձատրել, ուսուցչություն, կառուցապատում:

65 **Տրված բանաստեղծական հատվածում քանի՞ մակդիր կա:**

Անլեզու, անգիր հավերժից
Ասքեր է մեզ հուշում աշխարհը:
Ազգեր են հեռանում աշխարհից,
Ազգեր են ներխուժում աշխարհը:

66 **Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

հանձնել, չափազանց, փառաբանել, ջատագովել, տալ, խիստ, հիմնարկել, հիմնել, մեծարել, ավանդել, ստեղծել, հույժ:

67 **Ըստ հաջորդականության՝ նշել, թե որ հատվածը Եղիշե Չարենցի որ ստեղծագործությունից է:**

- Ով քաղաքից էր հեռավոր, ուր մառախուղ էր անորոշ,
  Նա բերել էր թոքախտավոր սիրտը, որպես կարմիր դրոշ:-
  Ով եկել էր՝ թողած հեռուն անծայրածիր մութը գյուղի,
  Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի:
- Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
  Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
  Եվ թող տեսնեն ի՛մ աչքերի մեջ կախվածի,
  Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան:
- Նայում է ապա նա փոշոտ քարին
  Աղեղանման հոնքերի տակով…
  Գրված է վրան. «**Եղիշե Չարենց,**
  Բանաստեղծ, ծնված Մակու քաղաքում»:
- Բարձրահասակ է, ջղուտ, աչքերը սև,
  Բակենբարդներ ունի, փոքրիկ մորուս:
  Ես որտե՞ղ եմ արդյոք նրան տեսել.
  Կյանքո՞ւմ արդյոք, տենդո՞ւմ, թե՞ գրքերում:

1. «Գանգրահեր տղան», 2. «Մահվան տեսիլ», 3. «Ամբոխները խելագարված»,
4. «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում»:

68 **Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

Հասկանալի էր, որ նման պայմաններում ինձ տրված չէր հանգիստ հոգով զբաղվել իմ գործով. զգում էի, որ իմ նյարդերը սկսում էին բողոքել, բացի դրանից, օրիորդը աստիճանաբար անտանելի էր դառնում ինձ համար:

1. **աստիճանաբար** - վերաբերական, **համար** - կապ, հետադրություն
2. **դառնում էր** - անկանոն բայ, անկատար անցյալ, **որ** - ստորադասական շաղկապ
3. **նման** - կապ, **ինձ** - անձնական դերանուն, տրական հոլով
4. **զբաղվել** - անորոշ դերբայ, չեզոք սեռ, **գործով** - գոյական, գործիական հոլով
5. **զգում էի** - դիմավոր բայ, սահմանական եղանակ, **բացի** - կապ, երկդրություն

69 **Նշել՝ տրված համարների դիմաց գրվածներից որոնք կան տվյալ հատվածում (նախադասությունները կետադրված չեն):**

Վագրը հանդարտ հեռացավ դեպի շամբուտը նրա հետևից հլու-հնազանդ կորյունը: Բաբեն ապշած հիացքով նայում էր հեռացող գազանին գեղեցիկ փայլուն մորթով թավշյա խոհուն աչքերով: Վագրը այդ իմաստուն կենդանին գիրք կանգ առավ և առամորդու իմաստուն հանդիսավորությամբ հետ դարձրեց գլուխը:

1. տրոհվող դերբայական դարձված
2. տրոհվող հատկացուցիչ
3. բացահայտիչ
4. ստորոգյալի զեղչում
5. տրոհվող որոշիչ

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:**

1. Սահմանական եղանակի բայաձևերի կազմությանը մասնակցում են բոլոր ձևաբայերը:
2. Բայի բոլոր եղանակներն ունեն ներկա ժամանակի բայաձևեր:
3. Բայի բոլոր եղանակներն ունեն ապառնի ժամանակի բայաձևեր:
4. Բայի բոլոր եղանակներն ունեն անցյալ ժամանակի բայաձևեր:
5. Ըղձական և հրամայական եղանակների դրական և ժխտական խոնարհման ձևերը պարզ են:
6. Ենթադրական եղանակի դրական խոնարհման ձևերը պարզ են, ժխտականը՝ բաղադրյալ: